



150. ԿԱՇԱՌԻ ԶԻԱՐ ԿԸ ԾԱԿԵ

Հարուստ քուրդ մե կը զարկե աղքատ քրդուն կըսպանե, սպանողին կը բռնին, կը տանին մըտ խայմախամ:

խայմախամ կը հարցու.

— Յորի՞ն սպանիր զմարդ:

— Խայմախամ աֆանդի, քանիմ տարի է՝ էնի գիշեր գիկեր իմ ցորեն ու չերդ կը գողներ, գողութեն բռնեցի, զարկի սպանի:

— Է՞, — կըսե խայմախամ, — վո՛ւա, քու գործ շա՛տ ծանտը է: Հարուստն ուր ծոցից կը հանե քիսըք մե, մեջն չիսուն օսկի, կը դնե խայմախամի չառեջ, խայմախամի աչքեր կը փիլան, կըսե.

— Գնա՛ քու գործին, ես քու տեղն էղնենք՝ թվընքով չը՛ սպանենք, կը բռնենք կապենք սան, խանջըրով օրեկան կտոր մե կը կըտրենք, կը թալենք շներուն:

Էդ չապով մեծորեք ըսեր ին.

— Կաշառք զքար կը ծակե:

